

**Ավանդական բժշկության համալսարանի
Ուսանողական Գիտական Ընկերության
Ամփոփիչ հաշվետվություն 2021-2022 ուստարի**

1. 2021թ. դեկտեմբերի 8-ին, ՈՒԳԸ-ն, գիտական մասի հսկողությամբ, կազմակերպել է ԱԲՀ-ում կազմակերպված Ուսանողական Գիտական Կոնֆերանսին, ինչպես նաև ՈՒԳԸ անդամները հանդես են եկել տարբեր գիտական զեկույցներով: Միջոցառմանն ակտիվորեն մասնակցել են ԱԲՀ ուսանողներ (Չ.Թարիք, Յ.Խամայիլ, Շ.Շվան, Ռ.Դլշադ, Շ.Ռոյմոն, Լ.Լաուչակ, Ս.Ռաչիլա, Բ.Բաղդասարյան, Մ.Աբրուլա):




2. Ամրապնդվել է Գիտական մասի կապն ՈՒԳԸ-ի հետ՝ մեծացնելով ՈՒԳԸ ներգրավվածությունն ուսանողների աշխատանքներում և ուսումնառության գործընթացում: Գիտական մասի կողմից կատարվել են բարեփոխումներ ՈՒԳԸ կանոնակարգի մեջ, մասնավորապես՝ ներմուծվել է ուսանող-ծրագրավարների (facilitator) ներգրավման համակարգը, ինչն ավելի շատ նախադրյալներ և լծակներ է ստեղծել ուսանողներին գիտական աշխատանքներում ներգրավելու համար: Մանրամասն տեղեկատվությունը հասանելի է ԱԲՀ գիտական մասի 2021-2022 հաշվետվությունում և ՈՒԳԸ վերանայված կանոնադրությունում:

3. Ներգրավելով ուսանողներին գիտական աշխատանքներում՝ հիմնվելով նրանց ուսումնառության փորձի վրա, գրանցվել են դրական արդյունքներ, մասնավորապես՝ վերջին ուստարում ուսանողների կողմից հողվածների տպագրություններ և մասնակցություն միջազգային գիտական կոնֆերանսներին, ընդգրկվածություն համալսարանական գիտահետազոտական խմբերում (Ա.Կամիլ - մասնակցություն կոնֆերանսի Բուլղարիայում՝ տպագրությամբ, թեմա՝ անոթային վիրաբուժություն, Չ.Ջամալ - մասնակցություն կոնֆերանսի Բելառուսում՝ տպագրությամբ, թեմա՝ օքսիդատիվ պրոցեսներ/ավանդական բժշկություն/գինեկոլոգիա, Յ.Ռորբանի - հողվածների տպագրություն, թեմա՝ օնկոլոգիա, Պ.Անջանկումար - մասնակցություն գիտահետազոտական խմբի աշխատանքներին, թեմա՝ ռեգեներատիվ բժշկություն/նեյրոգիտություն, Շիբբա Ռոյմոն և Սոջանիա Ռաչիլա - հողվածի տպագրություն, թեմա՝ կորոնավիրուսային հիվանդություն), ինչպես նաև բարձրացել է ուսանողների ակտիվությունը՝ միջազգային փոխանակային գիտական և ուսումնական ծրագրերի մասնակցելու առումով: Մանրամասն տեղեկատվությունը հասանելի է ԱԲՀ գիտական մասի 2021-2022 հաշվետվությունում:



4. ԱԲՀ գիտական մասի կողմից մշակվել և իրագործվել է «ԱԲՀ Բաց գիտություն» ծրագիրը, որի շրջանակներում պարբերաբար կազմակերպվում են բաց դասախոսություններ հրավիրված գիտնականների կողմից, որին ներկա են լինում ոչ միայն ԱԲՀ ուսանողները, այլև գիտնականներ, բժիշկներ և ուսանողներ այլ բուհերից, բժշկական և գիտահետազոտական կենտրոններից: Այս ծրագրի շնորհիվ կոնսոլիդացվում է փոխկապակցվածությունն ուսումնառության գործընթացի և գիտահետազոտական աշխատանքների միջև, ինչպես նաև ամրապնդվում է կապը տեղացի և արտասահմանցի ուսանողների և մասնագետների միջև: Այս առումով ԱԲՀ ՈՒԳԸ, ինչպես նաև ուսանող-ծրագրավարներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերել նախագծի շրջանակներում իրականացվող միջոցառումների կազմակերպման և տեղեկատվության վերլուծության գործում: ԱԲՀ գիտական մասի վարիչի ղեկավարմամբ, ՈՒԳԸ և ուսանող-ծրագրավարների ինստիտուտի հիման վրա ձևավորվել է ԱԲՀ Բաց գիտություն նախագծի կազմկոմիտե, որը զբաղվում է ծրագրի միջոցառումների կազմակերպմամբ և իրականացմամբ:

2022թ. հունիսի 21-ին, ժ. 15:00 տեղի ունեցավ «ԱԲՀ Բաց Գիտություն» նախագծի առաջին միջոցառումը, որի շրջանակներում դասախոսությամբ հանդես եկավ «BIO-SEE International Bioimaging Society» միջազգային ասոցիացիայի համակարգող, բժշկական տեխնոլոգիաների մասնագետ, բժիշկ Գևորգ Դմիտրյանը: Դասախոսության թեման էր՝ Հիպերսպեկտրալ պատկերում: Երկրորդ միջոցառումը տեղի ունեցավ 2022թ. հուլիսի 21-ին, ժ. 15:00, հիբրիդային ֆորմատով: Բոլոնիայի համալսարանի և Բոլոնիայի Նյարդաբանական գիտությունների ինստիտուտի բժիշկ, իտալացի նեյրոհոգեբույժ Յակոպո Պրուկկոլին հանդես եկավ դասախոսությամբ սնման և ախորժակի խանգարումների թեմայով:



Լիարժեք տեղեկատվությունը ծրագրի մասին, ինչպես նաև դրա շրջանակներում կազմակերպված բոլոր հանդիպումների ամբողջական տեսաձայնագրությունները հասանելի են ԱԲՀ կայքում և պարբերաբար թարմացվում են:

ՈՒԳԸ-ն նաև, ԱԲՀ գիտական մասի հետ համատեղ, հաջողությամբ ներգրավել է ուսանողներին Հայաստանյան տարբեր կոնֆերանսներին և գիտական միջոցառումներին մասնակցելու, ինչպես նաև տարբեր գիտահետազոտական կենտրոններ այցելություններ կազմակերպելու գործում:

ԱԲՀ Ուսանողական Գիտական Ընկերության նախագահ՝

Թարիք 2.Ձ.

ԱԲՀ Գիտական Մասի վարիչ՝

Գրիգորյան Վ.Ս.